ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

2015 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 9-ԻՆ ԺԱՄԸ 16:00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ՝ «ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

քաղ. Երևան

Մասնակցում էին՝

Վ. Ավետիքյան	ՀՀ կենտրոնական բանկի իրավաբանական վարչության պետ
Ս. Սիմոնյան	ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության պետի տեղակալ
Ա. Գրիգորյան	ԵՊՀ ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր
Լ. Ֆլջյան	ԵՊԼՀ գիտության և միջազգային կապերի գծով պրոռեկտոր
Լ. Ավետիսյան	ԵՊԲՀ ուսման որակի գնահատման և վերահսկման կենտրոնի ղեկավար
Ս. Օհանյան	Եվրասիա միջազգային համալսարանի ռեկտոր
Գ. Վարդանյան	ՀԱՊՀ ասպիրանտ, ՈՒԽ նախագահ
Է. Կիրակոսյան	Հայաստանի արդյունաբերողների և գործարարների (գործատուների) միության գործադիր տնօրեն
Ռ.Թոփչյան	«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի տնօրեն
Ս. Սարգսյան	Հայաստանի Բանկերի Միության նախագահի տեղակալ
Ա.Ութմազյան	«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի աշխատակազմի ղեկավար

1. Հիմնադրամի ֆինանսական քաղաքականության և ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացի սակագների քննարկում և հաստատում

(Ռ.Թոփչյան, Վ.Ավետիքյան, Ա.Գրիգորյան, Ս. Սիմոնյան, Ս.Սարգսյան, Ս.Օհանյան, Է.Կիրակոսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հաստատել՝

ա. «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի ֆինանսական քաղաքականությունը՝ դրա նախագծից հանելով 7-րդ կետը,

բ. ինստիտուցիոնալ հավատարմագրման գործընթացի սակագները,

2) հանձնարարել հիմնադրամի տնօրեն Ռ.Թոփչյանին՝ հոգաբարձուների խորհրդին ներկայացնել տեղեկանք հավատարմագրման գործընթացի սակագների հաշվարկման մեթոդաբանության և ուսումնասիրված միջազգային փորձի վերաբերյալ:

2. Լրամշակված «Փորձաքննության անցկացման ձեռնարկ»-ի հաստատում. Հավատարմագրման հանձնաժողովի որոշումների բողոքարկման ընթացակարգի փոփոխությունների քննարկում

(Ռ.Թոփչյան, Վ.Ավետիքյան, Ա.Գրիգորյան, Ս. Սիմոնյան, Ս.Սարգսյան, Է.Կիրակոսյան, Լ.Ֆլջյան, Լ.Ավետիսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) Հավատարմագրման հանձնաժողովի որոշումների բողոքարկման ընթացակարգում կատարել հետևյալ լրացումները.

ա. 1-ին կետը «մեկամսյա ժամկետում» բառերից հետո լրացնել «, ըստ ՈԱԱԿ-ի մշակած դիմում-բողոքի ձևաչափի:» բառերով,

բ. լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 5-րդ և 6-րդ կետերով.

«5.Նախորդ հավատարմագրման գործընթացում մասնակցած փորձագետները չեն կարող ընդգրկվել նոր փորձագիտական հանձնախմբում:

6. Փորձագետների հանձնախմբի կազմը համաձայնեցվում է ուսումնական հաստատության հետ:»

գ. 7.3) ենթակետը «եզրակացության կազմում:» բառերից հետո լրացնել «Փոձագիտական զեկույցն ուղարկվում է ուսումնական հաստատություն զեկույցում նշված փաստերի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ ներկայացնելու համար:» բառերով,

դ. 9-րդ կետը «խորհրդի անդամներին» բառերից հետո լրացնել «՝ ի գիտություն:» բառերով,

2) հաստատել՝

ա. հավատարմագրման հանձնաժողովի որոշումների բողոքարկման ընթացակարգն առաջարկված լրացումներով,

բ. լրամշակված «Փորձաքննության անցկացման ձեռնարկ»-ը:

3. Ստացված դիմում- բողոքների քննարկում

(Ա.Ութմազյան, Վ.Ավետիքյան, Ռ.Թոփչյան, Ա.Գրիգորյան, Ս. Սիմոնյան, Ս.Սարգսյան, Է.Կիրակոսյան, Լ.Ֆլջյան, Լ.Ավետիսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) կազմակերպել և իրականացնել Երևանի «Հայբուսակ» և Հյուսիսային համալսարանների կողմից բողոքարկված ինստիտուցիոնալ հավատարմագրման չափանիշների լրացուցիչ ուսումնասիրություններ,
2) հավանություն տալ խորհրդի նախագահի ներկայացրած ՈԱԱԿ-ի փորձագետների բազայից ընթրված փորձագետներից ձևավորված հանձնախմբերի կազմերին,
3) հանձնարարել ՈԱԱԿ-ի աշխատակազմին՝ պարբերաբար տեղեկացնել հոգաբարձուների խորհրդին ուսումնասիրությունների ընթացքի մասին:

4. Հիմնադրամի ENQA լիիրավ անդամակցության համար նախապատրաստական աշխատանքների ընթացքի քննարկում

(Ռ.Թոփչյան, Վ.Ավետիքյան, Ա.Գրիգորյան, Ս. Սիմոնյան, Լ.Ֆլջյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) հանձնարարել հիմնադրամի տնօրեն Ռ.Թոփչյանին՝ ս.թ. սեպտեմբերին հոգաբարձուների խորհրդին ներկայացնել ENQA լիիրավ անդամակցության դիմելու նպատակով իրականացված ՈԱԱԿ-ի ինքնավերլուծության նախնական տարբերակը:

5. Հիմնադրամի 2016-2020 թթ. Ռազմավարական ծրագրի հիմնական ուղղությունները

(Ռ.Թոփչյան, Վ.Ավետիքյան, Ա.Գրիգորյան, Ս. Սիմոնյան, Լ.Ֆլջյան)

Քննարկումներից հետո որոշվեց հանձնարարել՝

1) հոգաբարձուների խորհրդի բոլոր անդամներին մինչև հունիս ամսվա վերջը ՈԱԱԿ-ի աշխատակազմի ղեկավարին ներկայացնել հիմնադրամի ռազմավարական ուղղությունների մասին իրենց դիտարկումները,

2) ՈԱԱԿ-ի աշխատակազմին՝ շրջանառել ներկայացված դիտարկումներն ու հիմնադրամի մոտեցումները, ամփոփել և սեպտեմբեր ամսին ներկայացնել խորհրդի քննարկմանը:

6. ՈԱԱԿ-ի աշխատակազմի հետ հոգաբարձուների խորհրդի հանդիպումներ կազմակերպելու մասին

(Ռ.Թոփչյան, Վ.Ավետիքյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) ՈԱԱԿ-ի գործունեության վերաբերյալ հոգաբարձուների խորհրդի իրազեկվածության բարձրացման նպատակով հանձնարարել հիմնադրամի տնօրեն Ռ.Թոփչյանին՝ կազմակերպել հոգաբարձուների խորհրդի հանդիպում ՈԱԱԿ-ի աշխատակազմի հետ,

2) հոգաբարձուների խորհրդի նիստի օրակարգի 7-րդ հարցը՝ «Պետական կրթական չափորոշիչները և Որակավորումներ ազգային շրջանակը» քննարկել ՈԱԱԿ-ի աշխատակազմի հետ հանդիպման ժամանակ:

Հոգաբարձուների խորհրդի նախագահ Վ. Ավետիքյան

Հոգաբարձուների խորհրդի քարտուղար Ս. Սիմոնյան